

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Լ Է Օ

Հայոց պատմութիւն. — հատոր Ա. Հին պատմութիւն, — 50 նկար. — 3 փառեկ. — Հին Հայաստանի մեծ գունատիպ փառեկ, XIV+730 եր. հրատարակութիւն Փասպար Յ. Տեր-Մարգարեանի, Թիֆլիս. 1917 թ.

Գինն է 7 ռ.

Հայ կեանքի վերածնութեան, նոր ուղիների գծման այս տենդոտ ու վարանոտ ժամին շատ տեղին է լոյս տեսնում վաստակաւոր հայ գրող Լէօի այս մեծածաւալ աշխատանքը, որի հրատարակութեանը և հայ հասարակութիւնը վաղուց սպասում էր և ինքը հեղինակը երազում ու այսօր «...Բաց ճակատով հրապարակ է բերում տասնեակ տարիների մեծ աշխատանքի մի մասը...» (Իմ անդուդական բարեկամներին):

Հայ ժողովրդի պատմական «Հայոց Հարցի» լուծման համար եղած ու եղող պրօպանդայի համար լաւագոյն միջոցներից մէկը նկատուել է հայ ժողովրդի էկուլտուրական կենսունակութիւնը ապացուցանող ու ցուցադրող հրատարակութիւններ անելը. և այդպիսիների թւում անշուշտ իր որոշ տեղը կգտնէ և այս մեծածաւալ աշխատանքը, ուր հայ մարդու հոգեկան ու ֆիզիքական կարողութիւնների նկարագիրն է գրուած:

Յոյս ունենանք, որ քրտնաջան հեղինակը հնարաւորութիւն կունենայ իւր աշխատանքի Բ. և Գ. հատորներն ևս լոյս ընծայել ու ամբողջացնել իր գործը: Ինչ էլ լինի այնուամենայնիւ կունենանք մի ամբողջացած Հայոց պատմութիւն, որպիսին սկսած Չամչեանի Պատմութիւնից մինչև այժմ չունինք և կարմրելով էինք խօսում այս ցաւալի բացի համար, թէ միմիանց, թէ օտարների հետ:

Հեղինակը իւր քսան տարուայ աշխատանքը — Հայոց պատմութիւն գրելու համար վերջապէս իրականացրեց յաղթելով մի

շարք խոչընդոտների՝ ճնիթական անապահովութիւն, փխրուն առողջութիւն, ասիական միջավայրի անթիւ անյարմարութիւններ այսպիսի մի ձեռնարկութիւն լի ու լի յաջողութեամբ իրադրածելու համար, իրեն վիճակուած սահմանափակ կրթութիւն կայլն կայլն» (Իմ անդուգ. բարեկ)։ Որքան և յաջողութեամբ յաղթել է առաջին խոչընդոտներին, այնուամենայնիւ վերջին՝ սահմանափակ կրթութեան»-ը լիովին չի յաղթել, թէև անդուլ աշխատանքի շնորհիւ շատ բան է արել, և այս ոչ լիովին յաղթահարելը, այսինքն սահմանափակ կրթութեան այնուամենայնիւ հետքեր պահելը արտայայտուել է նրա և այս երկու տասնեակ տարիների աշխատանքի ամբողջութեան մէջ սկզբից մինչև վերջը, ինչպէս երևացել են Ղարաբաղի, Երևանի թեմական դպրոցների պատմութիւնների մէջ։

Հեղինակը իւր այս մեծ աշխատանքի Ա. հատորը գրելիս օգտուել է՝ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն աղբիւրներից թուով աւելի քան 200։ Արդէն այս թիւը ցոյց է տալիս, որ գրողը յիշատի անդուլ աշխատանք է գործ դրել ու իւրովսանն աշխատել է լի ու լի օգտուել լոյս տեսած նիւթերից։ Այս տեսակէտից քննադատելի գոցէ շատ բան չկայ ասելու, եթէ ուշադրութեան չառնենք նրա գերմաներէն, անգլիերէն չիմանալը, որպիսի լեզուներով ևս կան բաւականութիւ հրատարակութիւններ և որոնցից օգտուելու հնարաւորութիւն չի ունեցիլ։

Սակայն և ոչ մի պատմագիր չի կարող իւր ուսումնասիրութեան նիւթին վերաբերող աղբիւրները սպառել, եթէ նա աշխարհիս բոլոր լեզուներն իսկ իմանայ ու քսանի փոխարէն երեք քսան տարի աշխատէ, որովհետև նիւթը չէզոքացած մի ամբողջութիւն չէ, այլ շարկապուած է անմիջական ու միջնորդական կապերով բազմաթիւ երևոյթների հետ և ուրեմն այդ երևոյթների շուրջն եղած ուսումնասիրութիւնները, որոնց թիւը միշտ էլ աւելանում է, պէտք է սպառէ։ Այսպիսի պատմագիր ոչ եղել է և ոչ էլ կլինի ու Լէօն աղբիւրներից օգտուելու անբարեխղճութեան մէջ չէ որ կարող է մեղադրուել, այլ աւելի շուտ այդ աղբիւրները ինչպէս շահագործելու մէջ։

Այստեղ է, որ երևան պիտի գայ հեղինակի պատմագիտական պատրաստութիւնը՝ արուեստաւոր լինելը, որ կարողանայ առաջն ունեցած նիւթից կերտել մի ամբողջութիւն լրիւ ու գեղեցիկ։ Դժբախտաբար հեղինակը պատմագիտական յաջող պատրաստութիւն, ամբողջացրած ու լրիւ պատմահայեցողութիւն չունի և այդ հանգամանքը նրան դրդել է չինել իւր ամբողջ աշխատանքի մէջ կօմպիլիատօրի—տեղեկութիւններ հաւաքող ու իրար կցողի դերում։ Այս իսկ պատճառով նրա այս հաստատիւր

աշխատանքը հայոց պատմութեան գրականութեան մէջ գիտական նորութիւն չէ բերում, այլ միայն եղած պրպտութիւնների ու ուսումնասիրութիւնների գրեթէ ամբողջացում—միացումը:

Եթէ ի նկատի ունենանք Լէօի գրական աշխատանքները ընդհանրապէս և նրա աշխարհայեացքը՝ որ նա տառելապէս հրապարակախօս է և գէմօկրատ և ոչ գիտնական բառի բուն մտքով, ապա հաստատ ենթադրութիւն կարող ենք անել, որ իւր աշխատանքը հեղինակը գրել է հայերէն տառերով կարդացող ընթերցող հասարակութեան և ոչ գիտական պահանջներով բնօնաւորւածների համար: Այս տեսակէտից ուրեմն, հեղինակի աշխատանքը բաւարար է, որովհետեւ մի երկու բացառութեամբ հիտու է գիտական խորնաբանութիւնից ու մասնագիտական պարզաբանութիւնից և գրել է սահուն, պարզ լեզուով:

Կարծում եմ միայն այս տեսակէտից էլ պէտք է քննել հեղինակի աշխատանքը, մէկ կողմը թողնելով գիտական պահանջները և կանոններ, որ Լէօի քսան տարուայ աշխատանքը այնուամենայնիւ զուր չէ գնացել ու ունի իւր արժէքը մեր գրականութեան ու հասարակութեան համար:

Վերջին տեսակէտից նայելով միայն խնդրին պիտի տեսնենք մի քանի թերութիւններ և որոնց վերացնելով՝ ըստ իս հեղինակը իր գրած նպատակին աւելի լաւ կ'ծառայէ:

Հեղինակը պատմութեան գաղափարը որքան լայն է ըմբռնում այնուամենայնիւ ամբողջացրած չէ գեո, հոգեբանական տնտեսական գործօնների գերը իւր գրութեամբ պատահաբար ու քիչ է շեշտում և կիրառում. հոգեբանական գործօնը պատմական երևոյթների բացադրութեան համար շատ նպաստաւոր հանգագամանք է և կարևոր է միշտ էլ աչքի ուռաջ ունենալ:

Լէօն գիտէ, որ պատմութեան համար պէտք է աշխարհագրութեան, մարդաբանութեան, հնախօսութեան, լեզուագիտութեան, իրաւագիտութեան, տնտեսագիտութեան, և այլ գիտութիւնների տուեալներից օգտուել, գիտէ, որ պատմութիւնը ունի իւր օժանդակ գիտութիւնները, սակայն սխալուել է, որ այդ գիտութիւններից ժողոված իւր տեղեկութիւնները իրար ետևից շարել է ու գրքի ծաւալը մեծացրել երկու անգամ:

Եթէ նա չմոռանար այն հանգամանքը, որ պատմաբանը պէտք է օգտուի իւր աշխատութեան ընթացքում պատմական երևոյթները բացատրելու համապատասխան օժանդակ գիտութիւնների տուեալներով, ապա նա այդքան երկար տեղ չէր տայ «նախապատրաստութեան» որն ընդգրկում է 1—126 երեսը և ուր նա համառօտ նկարագրում է նախնական կուլտուրան օգտուելով

ղժրախտաբար հին աղբիւրներից՝ Տէյլօր, Բօկլ, Լիպպերտ հայլն, մինչդեռ նորագոյն հետազոտութիւններ կան. մի կողմից որովհետեւ նոյնը աւելի համառօտ կրկնում է 340—380 երեսում, (համեմատել յստկապէս 65—67 երեսը 345—7 երեսի հետ), միւս կողմից որովհետեւ այդ ամբողջ մասը անմիջական կապ չունի հայոց պատմութեան հետ: Այդ նիւթը ընդհանուր պատմութեան հետ կապ ունի և միայն օժանդակող է հայոց և առհասարակ բոլոր աղբիւրի պատմութեան: Եթէ այդպէս լայն նայիլու լինենք խնդրին, այն ժամանակ պէտք է տասն անգամ աւելի երեսներ նուիրենք և միւս գիտութիւնների տուեալների համառօտութեանը, որովհետեւ նրանց տուեալներն ևս պարզարանում են պատմական երևոյթները:

Հեղինակը իւր մտքում պէտք է ամբարած, պարզած ու շաղկապած ունենայ գիտութիւնների տուեալները, որ պատմական դէպքը բացատրելիս օգտագործէ ու լուսարանէ և ոչ թէ իր հաւաքածը քաղուածօրէն դնէ պատմութեան մէջ:

Նոյնպէս աւելորդ երկարաբանութիւն է և գրքի Բ. մասը. նախահայկական շրջանը 199—331 եր. ուր տալիս է Ուրարդուի, Նաիրի երկրների պատմութեան աղբիւրների, երկրի աշխարհագրութեան և քաղաքական պատմութեան մանրամասն նկարագիրը: Նախ, որ այդ երկրների պատմութիւնները դեռ ենթադրութիւններով են լի ու ստոյգ շատ չնչին բան կայ և երկրորդ՝ որքան և հայերը դրանց քաղաքակրթութեան ժառանգներն են, այնուամենայնիւ անհրաժեշտ չէ, որ նրանց քաղաքական պատմութեան մանրամասնութիւնները, որոնք անընդհատ պատերազմների, կոտորածների ու աւերածութիւնների շարքեր են միայն, ամբողջովին իմացուի: Մեզ հետաքրքրողը նրանց կուլտուրան է, որի ժառանգներն ենք հզիլ, որը և տալիս է հեղինակը 299—308 երեսում: Փոխանակ 20—25 երեսում տեղաւորելու այդ ամբողջը հեղինակը 132 երես է նուիրել և մի կողմից գրքի ծաւալը մեծացրել, միւս կողմից ընթերցողի յիշողութիւնը ծանրաբեռնել թուերով ու անուններով: Այլ հարց է, եթէ նա միայն Ուրարտուի մասին գրէր, իբրև մի ինքնուրոյն աշխատանք. այդտեղ նա ազատ է, որքան ուզում է մանրամասնութիւններ գրելու, բայց երբ Հայոց պատմութեան աշխատանքում է զետեղում այդքան մանրամասնութիւններ պէտք չէին: Փոխանակ 258 երես նուիրելու նախնական կուլտուրային և Ուրարտուի պատմութեան հեղինակը մոռացութեան է տուել աւելի կարևոր հանգամանք, այդ Հայաստանի հարևան երկրների՝ Պարսկաստան, Բիւզանդիա, Հռոմ, Սիւրիա, Վրաստան կուլտուրական և քաղաքական կեանքի համառօտ նկարագրները տալու այն տեղերում, երբ հայ ժողո-

վուրդը այդ երկրներից որ և է մէկի կամ ազդեցութեան է ենթարկուում կամ զրանց հետ կենդանի յարաբերութեան մէջ է մտնում: Չէ որ այդ երկրներից մենք շատ ենք ազդուել և ինքը հեղինակը անընդհատ շեշտում է այդ իւր գրումներում, ընթերցողը չի կարողանում պարզ գաղափար կազմել այդ ազդեցութիւնների մասին, որովհետեւ այդ երկրների նկատմամբ գրեթէ ոչինչ չի ասում հեղինակը:

Ընթերցող հասարակութեան լայն խաւերի համար գրող հեղինակը երբեմն մոռանում է իւր բուն նպատակը և ընկնում գիտական խնդիրների պարզարանութեան մէջ ու ի հարկէ իւր պատրաստութեան պակասութեան պատճառով խճճուում տեսութիւնների մէջ ու դառնում այս կամ այն հետազոտողի հետևորդ. ինչպէս օրինակ՝ Գ. մասի գլ. Ա.-ում Հնդկաստանի ազգերի, հայագիտութեան մասին խօսելիս 317—320 էր. կամ քրիստոնէութեան մասին խօսելիս 541—556 էր. Սրանք այնպիսի հարցեր են, որոնց չլիշատակելը այսպիսի աշխատանքի համար կորուստ չէ, յիշելու դէպքում էլ պէտք է վերջին հզրակացութիւնը տալ:

Ըստ իս հեղինակի հոգեբանութիւնը ընդհանրապէս այս է եղել, քսան տարի նիւթ է հաւաքել քաղաածներ է արել և ուղում է ցուցադրել այդ աշխատանքը ուստի և գրի է առնում ամեն բան, որով գործը ստուարանում է, խնդիրը խճողում ու այն ընթերցողը, որին հեղինակն ի նկատի ունի ընդհանրապէս շփոթութեան մէջ է ընկնում: Նման լեզուազիտական, կրօնական խնդիրների պարզարանութեան տեղը հայոց պատմութիւնը չէ, դրա համար կան յատուկ գիտական ճիւղեր, կարելի է առանձին աշխատութիւններ լոյս ընծայել և ոչ բերել հայ ժողովրդի պատմութեան հետ կապել:

Գիտական այսպիսի խնդիրների ետևից ընկնող հեղինակը մէկ էլ տեսար դառնում է աւանդութիւններ, վիպական-գիւցադներդական դէպքեր նկարագրող, վիպասան, ինչպէս օրինակ 577—655 էր. ուր պատմում է Տիգրանի, Արշակ Բ-ի, Պապի. Փարազդազի մասին գրեթէ Փաւստոսի կամ Թորենացու հետևողութեամբ ու ամենայն մանրամասնութեամբ: Այս մասում գիտնական հարցերի մէջ իրեն տկար ու խճճուած զգացող հեղինակը դառնում է ազատ. պատմաբան Լէօն գիտնականութեան աթոռի անյարմարութիւնից յետոյ իրեն սրտին մօտ վիպասանի բաղկաթուն է բազմում ու շատ լաւ է զգում իրեն: Վիպական դէպքերը Արշակ Բ-ի, Փառանձեմի պատմում է ախորժակով, մանրամասն և տեսնում ես, որ Լէօն իրեն ազատ է զգում այդ աշխարհում ու հաճելի է գրելը իր սրտին, կարողութեանը մօտ նիւթը:

Բերածս օրինակները ցոյց կտան պարզապէս, որ Լէօն պատմագիտութեան ասպարէզի գրող չէ նոր հասկացողութեամբ, այլ նա ժողովրդականացնող է որ և է նիւթ և զիպատան—հրապարակախօս է, քան պատմաբան։ Այդ հանգամանքն է սրտոճառ եղել, որ նրա պատմական միւս աշխատութիւններում նոյնպէս և աշտեղ պատմագիտականը միշտ ակամայից զոհել է հրապարակախօսական—վիպասանականին և չի պահել ամբողջութիւն իւր գրութեանը։ Բայց եւ նրա Յովսէփ Արդութեան, Մես. Մաշտոց, Վանի թագաւորութեան, Ղարաբաղի և Երևանի թեմական դպրոցների պատմութիւնները, որոնց մէջ պատմականը թոյլ կողմն է, հրապարակախօսական—վիպականը ուժեղ։

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ քեր ժողովրդի համար ընդհանրապէս և յատկապէս այս ժամանակում կարեւոր է հայ ժողովրդի պատմութեան զիւրնթեւնելի աշխատանք ունենալը, որ որքան կարելի է շատ հայեր կարդան իրենց ազգի անցեալի մասին, տեսնեն ռիւքեր են իրենց նախնիքը, որոնցով այժմ միայն հպարտանում են կամ որոնց չեն էլ ուզում ճանաչել, կտեսնենք, որ Լէօն աշխատանքը յիշածս կրճատումներն անելուց ու այն բազմաթիւ տառասխալներն ուղղելուց յետոյ, որի համար հեղինակն ինքն ասում է «բարբարոս ու անբարեխիղճ սրբագրութիւն է» (727 եր.) որ այս աշխատանքը իր նպատակը իր ստուարութիւն ընթերցողները ունի և պէտք է զոհ լինել, որ լոյս է տեսել։

Հաւատանք, որ Ա. հատոր հրատարակողը կիսատ չի թողնի քրտնաջան հեղինակի աշխատանքը և լոյս կընծայէ մնացած Բ. և Գ. հատորներն ևս և կամբողջացնեն պատմութիւնը։

Դիւտ վարդ.